ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Մանկավարժական աշխատողի մասնագիտական գիտելիքների ու հմտությունների կատարելագործման անհրաժեշտությունը:

Հաստատություն՝ Երևանի հ. 96 <<Հեքիաթ>> մսուր մանկապարտեզ

Դաստիարակ՝ Բաղալյան Մարիամ

Ղեկավար՝ Ավետիսյան Ժաննա

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ……3

1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ……4
2. ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՆՏԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿՈՄՊԵՆՏԱՑԻԱՆՆԵՐԸ ……6
3. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ…… 9
4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ…. 14

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ…… 18

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ…… 19

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի ժամանակաշրջանում ավելի հաճախ է պահանջվում տարբեր բնագավառների գիտնականների ջանքերի միավորումը կրթության տեսության և պրակտիկայի առջև ծառացած բարդ խնդիր ների լուծման համար: Հենց այդ առումով էլ չափազանց կարևոր է, որ կրթական գործընթացի կառավարմանը մասնակցող յուրաքանչյուր սուբյեկտ հստակ պատկերացնի դասավանդման առանձնահատկությունները, տեխնոլոգիաները և որոշի իր տեղն ու դերը մանկավարժական գործընթացում:

Կրթական բարեփոխումների համատեքստում առաջատար խնդիր է համարվում մանկավարժի մասնագիտական կրթության որակի բարձրացումը, ով արագ կհարմարվի նորամուծություններին և նորարարություններին և դրա հիման վրա ստեղծագործաբար կկատարելագործի ուսումնադաստիարակչական գործընթացը՝ համապատասխանեցնելով ժամանակի պահանջներին և հասարակության կրթական պահանջմունքներին:

Մանկավարժի պրոֆեսիոնալիզմի մակարդակի նկատմամբ այսօրինակ պահանջները ենթադրում են մասնագիտական պրակտիկայի բովանդակության և տեխնոլոգիայի կատարելագործում, մանկավարժի գործունեության կազմակերպման հոգեբանամանկավարժական և գիտամեթոդական կառուցվածքի որակական փոփոխություն, ինքնակրթության և ինքնազարգացման նախագծում և դրա իրացման պայմանների ապահովում: Այս համատեքստում մանկավարժի մասնագիտական կատարելագործումը չափազանց կարևոր նշանակություն է ձեռք բերում:

1. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԷՈՒԹՅՈՒՆԸ

Մանկավարժի գործունեությունն ուղղված է անձնավորության ձևավորմանը և զարգացմանը: Մանկավարժի գերխնդիրն ու առաքելությունը մարդկային էության բացահայտումն է, հոգու կառուցումը: Հասարակության կողմից կրթական համակարգին ներկայացվող պետական պատվերը՝ ֆիզիկապես և հոգեբանորեն առողջ սերնդի ձևավորումն է, որի իրականացնողը մանկավարժն է: Մանկավարժը անմիջականորեն չի մասնակցում հասարակական արդյունաբերության գործընթացին, սակայն ձևավորում է մարդ, որը հասարակության նյութական և հոգևոր բարիքների ստեղծողն է, ազգի և պետության հիմնարար արժեքների կրողը և հասարակության ամենաթանկ հարստությունը: Երկրի բարեկեցությունը, մարդկության առաջընթացը մեծապես կախված է աճող սերնդի ստեղծագործական և հոգևոր ներուժից: Այսպիսով, մանկավարժի առաջնային սոցիալական գործառույթը մարդկային ներուժի, նրա ոգեղենության վերարտադրումն է: Պահպանելով և փոխանցելով համամարդկային արժեքներ, հաղորդակից դարձնելով Երեխային արժեքային համակարգին, մանկավարժը սերմանում է կատարյալ մարդկային էության ձգտելու ցանկություն, զարգացնում է հոգևոր արժեքներ կրողի զգացողություն, նպաստում հասարակության արժանապատիվ անդամ լինելու ձգտմանը:

Իրականում, մանկավարժի գործունեության իմաստն ավելի բարդ է և պատասխանատու, քան թվում է առաջին հայացքից: Այն ուղղված է ինքնուրույն մտածելակերպի և կյանքի դիրքորոշման ձևավորմանը, ինչը հնարավորություն է տալիս ազատ կողմնորոշվելու և գիտակցաբար ընտրելու հասարակության հետ հարաբերվելու եղանակները: Մանկավարժի սոցիալական գործառույթներից է օգնել երեխային հարմարվել տվյալ հասարակության սոցիալ-մշակութային միջավայրին, սովորեցնել հաղթահարել զարգացող, հետևաբար մշտապես փոփոխվող հասարակության կողմից ներկայացվող դժվարությունները, նպաստել տվյալ հասարակության հետ ներդաշնակ համակեցությանը: Մանկավարժի գործունեությունն ինքնին մարդասիրական է, այն

ակամայից զտում է հասարակության պոզիտիվ կողմերը, բացահայտում զարգացման հեռանկարները և փորձում հասարակական փորձն աճող սերնդին փոխանցել վերլուծաբար՝ ընդգծված դրական շեշտադրումներով։ Հասարակության նեգատիվ երևույթները, պարզապես, մատնանշվում են և շրջանցվում։

Հասարակական կյանքի այժմյա հումանիզացման և ժողովրդավարացման միտումները փոխանցելի են առաջին հերթին մանկավարժական գործունեության միջոցով, որին ներկայացվող մանկավարժական պահանջները գնալով բարդանում են։ Մանկավարժի սոցիալական գործառույթներից է ժամանակակից հասարակության պահանջներին համապատասխանող մանկավարժական գործունեության ծավալումը։

Վերջապես, մանկավարժը կատարում է ևս մեկ կարևորագույն գործառույթ, նրան է վստահված աճող սերնդի զարգացման աստիճանի գնահատման և վերահսկման պատասխանատու գործը։ Պատասխանատու լինելով ողջ հասարակության առջև, մանկավարժն հաշվետու է նախ ինքն իր առջև, նա անընդհատ շտկման և վերակառուցման է ենթարկում իր կողմից կազմակերպվող մանկավարժական գործունեությունը։ Այսպիսով, մանկավարժն իր բոլոր սոցիալական գործառույթներն իրագործում է մանկավարժական գործունեության արդյունավետ կազմակերպման միջոցով։ Մանկավարժական գործունեությունը մանկավարժի մասնագիտական գործիքն է։

2. ՄԱՆԿԱՎԱՐԺԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՄՊԵՆՏԵՆՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԿՈՄՊԵՆՏԱՑԻԱՆՆԵՐԸ

Վերջին ժամանակներում մանկավարժական գիտության մեջ և մասնագիտական կրթության ոլորտում մեծ տարածում և կիրառություն են գտել «մասնագիտական կոմպետենտություն» և «մանկավարժական կոմպետենցիաներ» հասկացությունները:

Կոմպետենտություն (կարողունակություն) հասկացությունն ունի լատինական ծագում, competo նշանակում է հասնում եմ, ձգտում եմ, համապատասխանում եմ: Ս.Ի. Օժեգովի բառարանում կոմպետենտը մեկնաբանվում է որպես «որևէ ոլորտում գիտակ, բանիմաց, տեղեկացված, իսկ կոմպետենցիան՝ հարցերի ամբողջություն, որոնցում ինչ-որ մեկը լավ տեղեկացված է»:

Կրթական չափորոշիչների օրինակի վրա ներկայացնելով՝ կարելի է ասել, որ կոմպետենցիաները «կրթության բովանդակության մինիմումն են», իսկ կոմպետենտությունը՝ «շրջանավարտներին ներկայացվող պահանջները»: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ կոմպետենցիաները կոմպետենտության բովանդակությունն են, իսկ կոմպետենտությունը՝ կրթության վերջնաարդյունքը՝ անձի կարողունակությունը:

Կոմպետենտությունը մասնագիտական-մանկավարժական գործունեության տեսանկյունից մեկնաբանվում է որպես տեսական գիտելիքները, գործնական կարողությունները և մասնագիտական որակները միավորող մի ամբողջական երևույթ, մասնագիտական կարողունակություն:

Յուրաքանչյուր կոմպետենցիա բաղկացած է հետևյալ բաղադրիչներից՝

- ճանաչողական ոլորտ՝ գիտելիքներ,
- դրդապատճառային ոլորտ՝ կոմպետենցիաների արտահայտման պատրաստություն,
- արժեքաիմաստային ոլորտ՝ կոմպետենցիաների բովանդակության նկատմամբ վերաբերմունք,

▸ վարքագծային ոլորտ՝ տարբեր իրավիճակներում կոմպետենցիաների դրսևորման փորձ:

Այսպիսով՝ կոմպետենտության հիմքում ոչ միայն գիտելիքները, կարողությունները և հմտություններն են այլ նաև՝ ուսուցման արդյունքները, արժեհամակարգը, դրդապատճառային, վարքագծային, սոցիալական բաղկացուցիչները:

Սակայն պետք է նշել, որ կան հետազոտողներ, որոնք կոմպետենտությունը չեն կապում որոշակի գիտելիքների և կարողությունների հետ, քանի որ գիտելիքները, կարողությունները ժամանակի ընթացքում՝ մշակույթի, գիտության զարգացմանը, հասարակական գիտակցության փոփոխությանը զուգընթաց հնանում են, կորցնում են իրենց արդիականությունը: Կոմպետենտությունը ներկայանում է որպես մանկավարժական գործունեության ընթացքում ցուցաբերած մասնագիտական և անձնային բաղադրիչների ամբողջություն՝ անձնային որակների գերակայությամբ: Անձնային որակների շարքում նշվում են ինքնուրույնությունը, հաղորդակցվելու ունակությունը, ճշտապահությունը, ինքնազարգացման ձգտումը, որոշակի աշխատանքային պայմաններում հարմարվելու կարողությունը:

Մասնագիտական կոմպետենտությունը ավելի լայն է հասկանում և առաջարկում է նրա բաղադրամասերի հետևյալ դասակարգումը.

▸ մասնագիտական գիտելիքների, կարողությունների և հմտությունների համակարգ,

▸ մասնագիտական խնդիրներն ինքնուրույն ստեղծագործական լուծելու ձգտում և ունակություն,

▸ մարդկանց հետ աշխատելու, համագործակցելու հոգեբանական և սոցիալ-հոգեբանական պատրաստություն,

▸ բարոյագաղափարական հասունություն և շփման, հաղորդակցման մշակույթ:

Մասնագիտական կոմպետենտությունը ենթադրում է՝

▸ Որակավորման բարձր մակարդակ,

▸ Տվյալ ոլորտում գործելու իրավասություն,

▸ Մասնագետի կրթվածության մակարդակ,

▸ Կատարողական վարպետություն,

▸ Ընդհանուր-մշակութային կոմպետենտության բաղադրամաս:

Մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության բաղադրամասերն են.

▸ Ոչ միայն հարուստ և լայն առարկայական գիտելիքներ, այլ նաև տեսական գիտելիքներ մանկավարժությունից, հոգեբանությունից և այլ գիտություններից,

▸ սովորողների և գործընկերների հետ հաղորդակցվելու և համագործակցելու կարողություններ և ունակություններ,

▸ դիմացինին գնահատելու, արժեվորելու ունակություններ,

▸ անձնային և մասնագիտական որակների առկայություն:

Առանձնացվում են մասնագիտական հետևյալ առանցքային կոմպետենցիաները՝

- առարկայական-մեթոդական,
- հոգեբանամանկավարժական,
- ճանաչողական,
- սոցիալ-մշակութային,
- հանրամշակութային,
- գիտահետազոտական,
- հաղորդակցական,
- կառավարման,
- տեղեկատվական-տեխնոլոգիական,
- խոսքային-լեզվական,
- նախաձեռնողական-կազմակերպական և այլն:

Մասնագիտական-մանկավարժական կոմպետենտության կարևոր բաղադրիչ է նաև ռեֆլեքսիան: Ռեֆլեքսիան անձի ներհոգեկան ակտերի և վիճակների ինքնաճանաչման գործընթացն է: Դա մարդու գործունեությունն է, որն ուղղված է սեփական գործողությունների, ներքին վիճակների, զգացմունքների, ապրումների իմաստավորմանը, վերլուծությանը և համապատասխան եզրահանգումների կատարմանը: Որպեսզի մարդը կարողանա հասկանալ ինքն իրեն, վերահսկի և

կարգավորի սեփական գործողությունները, զարգացնի իր ներաշխարհը, նա պետք է ունենա ռեֆլեքսիվության զարգացման բարձր մակարդակ:

Հաճա՞խ ենք, արդյոք, մանկավարժները իրենց հարց տալիս, թե «ինչպիսին եմ ես», «ինչու եմ ես այսպիսի արդյունքներ ստանում և ոչ թե այլ», «ինչպես են ինձ վերաբերում և ընդունում ուսանողներս կամ աշակերտներս», «ինչում եմ ես հաջողությունների հասել, և որ ոլորտներում դեռ անելիք ունեմ»:

Այս հարցերը ժամանակ առ ժամանակ պետք է իրեն տա ցանկացած մանկավարժ: Այն տանում է նրան դեպի ինքնավերլուծություն և ինքնաքննադատություն, սեփական սխալների ընդունման և արժեհամակարգի վերանայման և փոփոխման: Միայն նման մտածող, կասկածող, սեփական գործունեությունը վերլուծող մանկավարժն է դառնում իր գործի իսկական մասնագետ:

3.ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Վերջին տարիներին կրթության համակարգում ընթացող բարեփոխումները պահանջում են մանկավարժների մասնագիտական կայացման և մանկավարժական գործունեության կատարելագործման, մասնագիտական կոմպետենցիաների և փորձի հարստացման, սոցիալական համագործակցության նոր տեխնոլոգիաների մշակում և ներդնում պրակտիկայում:

Այժմ մանկավարժների մասնագիտական գործունեության կատարելագործման հարցի վերաբերյալ կան մի շարք տեսական մոտեցումներ, որոնք հիմք են ծառայում նրանց կողմից դասավանդման արվեստի գիտական հիմունքների յուրացման և մասնագիտական կայացման համար: Այս տեսանկյունից առաջնային է դառնում նաև մասնագիտական կրթության տեսության և մեթոդիկայի ուղղությամբ մանկավարժական այնպիսի հետազոտությունների կատարման անհրաժեշտությունը, որոնք կնպաստեն սկսնակ մանկավարժների մասնագիտական կայացմանը, մանկավարժական

վարպետության ձևավորմանը, նրանց կողմից դասավանդման հիմունքների, ուսուցման սկզբունքների և օրինաչափությունների յուրացմանը, կրթական նոր տեխնոլոգիաների մշակման գործընթացին նրանց մասնակցությանը, որի շնորհիվ էապես կբարձրանա ուսուցման որակը:

Ելնելով մանկավարժի մասնագիտական զարգացման, ինքնակատարելագործման հոգեբանամանկավարժական տեսական դրույթներից և գիտական հիմնավորումներից՝ մանկավարժական գործունեության կատարելագործումը կարելի է դիտարկել որպես անընդհատ գործընթաց հետևյալ փուլերով.

-Դրդապատճառային-նպատակային. Այս փուլում ձևավորվում են մանկավարժի մանկավարժական գործունեություն իրականացնելու պահանջմունք և դրական դրդապատճառ, որոնք նրան մղում են համապատասխան արժեքների յուրացման, սուբյեկտային դիրքորոշման ապահովման, մանկավարժական գիտելիքների, կարողությունների և հմտությունների յուրացման: Արդյունքը լինում է մանկավարժական գործունեության դրական դրդապատճառների ձևավորումը և մասնագիտական զարգացմանն անձնային իմաստ հաղորդելը:

-Մասնագիտական գործունեության կատարելագործման բովանդակության և համագործակցության ծրագրի մշակման փուլում իրականանում են մանկավարժական գործունեության հիմունքների, նորմերի, արժեքների յուրացումը: Արդյունքը մանկավարժական հաղորդակցման միջոցներին, դասի կառավարման սկզբունքներին, գործառույթներին տիրապետումն է, ինքնառեֆլեքսիայի, ինքնագնահատման կարողությունների և կոմպետենցիաների ձևավորումը:

- Իմիջի մասնագիտական Ես-հայեցակարգի գիտակցման և յուրացման փուլում ընթանում է մանկավարժական իմիջի դրդապատճառային, ճանաչողական, գործունային, հուզական, մանկավարժական մշակույթի և մասնագիտական Ես-հայեցակարգի՝ ձևավորումը:

- *Կազմակերպչական տեխնոլոգիական փուլում* ընթանում են մանկավարժական գործունեության կատարելագործման նոր ձևերի ու մեթոդների որոնում, գործունեության

ռեֆլեքսիայի իրականացման կարողությունների, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորում:

-Գործունեության վերլուծության և արդյունքների գնահատման փուլ:

Արդյունքը մանկավարժական մասնագիտական գործունեության և մանկավարժական տեխնիկայի կատարելագործումն է, մանկավարժի մասնագիտական անհատականության ձևավորումը և կայացումը:

Այսինքն՝ մանկավարժական գործունեությունը կարելի է համարել մանկավարժի միասնականացված որակների և դրդապատճառային - նպատակային, մտածողական, գործունային, կազմակերպչական-տեխնոլոգիական, հուզական-գնահատող բաղադրիչների ամբողջություն:

Գաղտնիք չէ, որ սկսնակ մանկավարժները շատ հաճախ են դիմում աշխատանքային մեծ փորձ ունեցող ուսուցիչներին մեթոդական օգնություն ստանալու համար: Սակայն այսօր պահանջվում է ոչ թե մենթորության միջոցով մեթոդական փորձի ուղղակի փոխանցում, այլ անհրաժեշտ կոմպետենցիաների յուրացում՝ հենվելով մարդակենտրոն կողմնորոշման վրա: Այնուհանդերձ մանկավարժագիտության մեջ տակավին ոչ լիարժեք են ուսումնասիրված մանկավարժների մասնագիտական կատարելագործման մի շարք տեսանկյուններ.

-մասնագիտական կոմպետենցիաների ձևավորման գիտամեթոդական, հոգեբանամանկավարժական և տեխնոլոգիական կողմերի ապահովման հիմնախնդիրը.

- ստեղծագործական ներուժի ակտիվացման, ինքնիրացման և ինքնազարգացման համար պայմանների ստեղծման հիմնախնդիրը:

Անշուշտ, նշված հիմնախնդիրների լուծման հաջողությունը պայմանավորված է բուհում ապագա մանկավարժների պատրաստման և նրանց մասնագիտական կատարելագործման արդյունավետությամբ: Սակայն կրթության զարգացման կառավարման ապահովման համար հրատապ է դառնում մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործման այնպիսի տեխնոլոգիաների

ներդրումը, որոնք հնարավորություն կտան բարձրացնելու մանկավարժի մասնագիտական գործունեության որակը և կատարելագործելու մանկավարժական վարպետությունը:

Մասնագիտական մանկավարժական գործունեության կատարելագործման հիմնախնդրի տեսական մեթոդաբանական հիմնավորումը կոմպետենտային մոտեցման տեսանկյունից հնարավորություն կտա կրթական հաստատության կառավարման սուբյեկտներին համապատասխան մասնագիտական միջավայր ստեղծելու և նպաստելու մանկավարժների ստեղծագործական անհատականության և ինքնառեֆլեքսիայի կարողությունների, մասնագիտական, հաղորդակցական, առարկայական կոմպետենցիաների զարգացմանը:

Մանկավարժների մասնագիտական մանկավարժական գործունեության կատարելագործման տեխնոլոգիաներն են՝

-*մտամարզման տեխնոլոգիան,* որը զարգացնում է նրա մանկավարժական մտածողությունը, մանկավարժական տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու և ճիշտ որոշում կայացնելու կարողությունները, հարստացնում մասնագիտական գիտելիքները: Այս տեխնոլոգիան ներառում է մտամարզման տեսակները՝ քեյսեր /իրավիճակային խնդիրներ/, ուղեղային գրոհ, բանավեճ, ստեղծագործական նախագծերի մշակում, ուսուցման ռազմավարությունների մշակում, մասնագիտական զարգացման առաջադրանքներ, և մտամարզման փուլերը՝ ախտորոշում, իմացական ոլորտի տվյալների փաստագրում:

- *մասնագետ-խորհրդատուի հետ համագործակցության տեխնոլոգիան*, որը նպաստում է մանկավարժի մեթոդական գործունեության կատարելագործմանը և մասնագիտական կայացմանը, նրա մանկավարժական իմիջի ձևավորմանը:

Մասնագետ-խորհրդատուի համագործակցության տեխնոլոգիայի կիրառման ընթացքում մասնագետ-խորհրդատուն ոչ թե հրապարակավ դիտողություններ և ուղղումներ է անում՝ սաների ներկայությամբ հեղինակազրկելով մանկավարժին, այլ

նախօրոք պլանավորելով համատեղ գործունեությունը՝ անցկացնում են դասը, ապա դասից հետո վերլուծում կատարած աշխատանքը:

Յուրաքանչյուր մասնագետ-խորհրդատու պետք է ունենա յուրաքանչյուր մանկավարժի համար հատկացված թղթապանակ, որը պետք է պարունակի օրվա վերլուծական հարցաթերթիկներ, դիտման ընթացքում արձանագրված փաստեր՝ հաջողություններն ու անհաջողությունները, աստիճանական առաջընթացը արձանագրելու համար:

Մասնագետ-խորհրդատուն պետք է օգնի մանկավարժին՝ հաղթահարելու նորարարության ներդնման գործընթացում անվստահությունը, լարվածությունը: Այս տեխնոլոգիայի արդյունքում մանկավարժը ոչ միայն տեսականորեն, այլև գործնականում լիարժեքորեն կտեղեկանա յուրաքանչյուր նորարարության իրագործմանը և կարժևորի ստացած արդյունքները:

Մասնագիտական գործունեության կատարելագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ իրականացվող մեթոդական աշխատանքները՝ դասալսումները, կրթական գործընթացի տարբեր ռազմավարությունների նախագծման և մշակման աշխատանքները, սեմինար պարապմունքները, մանկավարժական մասնագիտական ստեղծագործական և հետազոտական աշխատանքների շնորհանդեսները, մանկավարժական ընթերցումները առաջավոր փորձի տարածման լավագույն միջոցներ են և կարող են ապահովել մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործման գործընթացի արդյունավետությունը:

4. ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՂԻ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՄԱՆ ԳՈՐԾՆԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումների և ինովացիաների արդի պայմաններում մանկավարժների մասնագիտական զարգացման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության կատարելագործման յուրահատկությունը պայմանավորված է ժամանակակից սոցիալ-մշակութային դինամիկ իրավիճակով, մանկավարժի մասնագիտական դիրքորոշմամբ և հասարակության զարգացման մեջ իր դերի նկատմամբ մեծագույն պատասխանատվությամբ:

Հիմք ունենալով այս յուրահատկությունը՝ կարելի է առանձնացնել ուսուցչի մասնագիտական դիրքորոշումները՝ ուսուցիչ-մասնագետ, ուսուցիչպրոֆեսիոնալ, ուսուցիչ-դաստիարակ:

Մասնագիտական դիրքորոշումները՝ որպես անհատական դինամիկ որակներ, ինտեգրում են գիտակցական ուղղվածությունը, պրոֆեսիոնալ վարքը, անձնային և մասնագիտական արժեքները: Դրանք անմիջականորեն կապված են մանկավարժի անհատական մանկավարժական և մեթոդական մշակույթի զարգացման մակարդակի հետ և համարվում են նրա արդյունավետ գործունեության գրավականը:

Ժամանակակից պայմաններում մանկավարժի մասնագիտական կայացմանը նպաստող գործոնները, մասնավորապես առարկայական մեթոդական մասնախմբերի գործունեությունը, որի հիմնական ուղղությունները պետք է լինեն.

- -մանկավարժական նոր տեխնոլոգիաների փորձաքննությունը և փորձարկումը, տեղեկատվական տարբեր միջոցների կիրառումը,
- -սովորողների ուսումնահիմացական գործունեության կազմակերպման ինովացիոն ձևերի ներդնումը,
- -մանկավարժների՝ միմյանց և սաների հետ փոխգործակցության կազմակերպումն ինովացիոն գործունեության շրջանակներում,

- -ուսումնական հաստատություններում կրթական ծրագրերի, մեթոդական ապահովման կատարելագործումը,
- - մանկավարժական վարպետության ձևավորումը, մասնագիտական զարգացումը և կայացումը,
- - կրթության որակի ապահովումը:

Այս ուղղություններից ելնելով՝ կարելի է առանձնացնել նաև մանկավարժների հետ տարվող աշխատանքների նախագծումը, դասալսումները, ցուցադրական դասերը, սեմինար պարապմունքները, մանկավարժական ընթերցումները, որոնք առաջավոր փորձի տարածման լավագույն միջոցներն են:

Սկսնակ մանկավարժների մանկավարժական և աշակերտական կոլեկտիվներին հարմարվելու, ինքնիրացման, մասնագիտական զարգացման խնդիրների լուծման ուղղությամբ պետք է իրականացվեն հետևյալ աշխատանքները՝

- -փորձառու մանկավարժների մասնագիտական օգնություն,
- -մանկավարժական խորհրդատվության կազմակերպում,
- -առարկայական մեթոդական մասնախմբերի մեթոդական օգնություն,
- -կառավարող սուբյեկտի կողմից մանկավարժների ինքնակրթության խթանմանն ուղղված գործունեություն:

Ներկայացնենք մանկավարժի մասնագիտական գործունեության արդյունավետության խթանման գործոնները՝

- -գործոններ, որոնք կապված են աշխատանքի արտաքին պայմանների հետ,
- -գործոններ, որոնք կապված են աշխատանքի բովանդակության հետ,
- -աշխատավարձը,
- -կոլեկտիվում միջանձնային հարաբերությունները,
- -ղեկավարության կառավարման ոճը, վերահսկողության մակարդակը,
- -աշխատատեղի հարմարավետությունը:

Կարծում ենք, որ մանկավարժի գործունեության մասնագիտական արդյունավետության խթանիչներ են՝

- -մանկավարժի կազմակերպչական և ստեղծագործական ընդունակությունների զարգացման մակարդակը,
- -ինքնուրույնությունը,
- -կրթական հաստատությունում ստեղծագործական-կրթական միջավայրի առկայությունը,
- -մանկավարժի կողմից առաջարկվող նորամուծությունների արժևորումը և ներդրման հնարավորությունների ապահովումը,
- -մանկավարժի աշխատանքի գնահատումը և նրա մասնագիտական աճի հնարավորությունների ապահովումը կրթական հաստատության կառավարման սուբյեկտների կողմից:

Մանկավարժի մանկավարժական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է մանկավարժական վարպետությամբ, որի ձևավորումն սկսվում է բուհում և շարունակվում մանկավարժական բազմամյա գործունեության ընթացքում: Աներկբա է, որ մանկավարժների մանկավարժական վարպետության կատարելագործման և դրա հիման վրա մանկավարժական գործունեության արդյունավետության բարձրացման հիմնական միջոցը ուսումնական հաստատություններում կազմակերպվող աշխատանքներն են:

Սկսնակ մանկավարժի աշխատանքում առկա թերությունները կարող են կապված լինել ինչպես բուն գործունեության, այնպես էլ մասնագիտական պատրաստության և վարքի դրդապատճառների մեջ: Օրինակ՝ գործունեության ոլորտում դրսևորվող թերություններից են՝

- դասի կազմակերպման միօրինակությունը,
- սաների նկատմամբ անհատական մոտեցում չցուցաբերելը,
- սաների ակտիվությունը չխթանելը,
- մանկավարժական տակտի պակասը,

- իր մասնագիտության նկատմամբ հարգանքի պակասը,
- իր մասնագիտական գործունեության նկատմամբ ոչ բավականաչափ հետաքրքրությունը,
- ուսուցման գործընթացի կազմակերպման հոգեբանամանկավարժական պահանջներին չտիրապետելը,
- ուսուցման և դաստիարակության նորագույն տեխնոլոգիաներին չտիրապետելը, որի պատճառով նվազում է սովորողների հետաքրքրությունն առարկայի նկատմամբ,
- ինքնատիրապետման և ինքնառեֆլեքսիայի ցածր մակարդակը,
- հումորի զգացման պակասը:

Այդ թերությունների վերացման համար կարելի է նախանշել մի շարք ուղիներ՝

- ստեղծագործական գործունեության խթանում,
- դասի կառուցվածքի համապատասխանեցումը սովորողների ուսումնառության նպատակներին,
- սովորողների համար հարմարավետ կրթական միջավայրի ստեղծում,
- մանկավարժ-սան համակառավարման ապահովում դասագործընթացում:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Կատարված ուսումնասիրության արդյունքների վերլուծությունը, դրանց քննարկումը և ընդհանրացումը հնարավորություն ընձեռեցին կատարել հետևյալ եզրակացությունները.

1. Կրթական բարեփոխումների արդի փուլում հատուկ կարևորություն է ստանում մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործումը, որը հանդես է գալիս որպես անընդմեջ արժեքաիմաստային ինքնորոշում, մասնագիտական ինքնիրացում, որոնցով պայմանավորված է կրթության որակի բարձրացումը և իրականացվող ինովացիաների արդյունավետությունը:

2. Ուսումնասիրության առանցքն են կազմում մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործման կառավարման առանձնահատկությունների վերլուծությունը: Մասնագիտական գործունեության կատարելագործման հիմնական առանձնահատկություններն են՝

- մանկավարժը միևնույն ժամանակ համարվում է կառավարման օբյեկտ և սուբյեկտ:
- կառավարման սուբյեկտների համագործակցությունը, որի արդյունքում կառավարումը փոխակերպվում է համակառավարման,
- գործունեության կազմակերպման նախագծային-ծրագրային և կազմակերպական-տեխնոլոգիական բնույթը:

3. Մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործման հիմնահարցի ուսումնասիրության արդյունքում հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից բացահայտվել, վերլուծվել և համակարգվել են մանկավարժի մասնագիտական կայացման խնդիրները և մանկավարժական գործունեության կատարելագործման միջոցները, ձևերը, մեթոդները, փուլերը, չափանիշները, արդյունքները:

4. Մանկավարժի մասնագիտական գործունեության կատարելագործումը նպատակաուղղված է նրա ռեֆլեքսիայի, ստեղծագործական մտածողության, մանկավարժական մշակույթի, մանկավարժական կոմպետենցիաների ձևավորմանը և կրթական գործընթացի որակի բարձրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. «Նախադպրոցական կրթության մասին» ՀՀ օրենք.
2. «Նախադպրոցական մանկավարժություն» - Երևան 2008 թ. /Ս. Մարության, Ա. Դալլաքյան/
3. «Ուսումնական ձեռնարկ մանկապարտեզի համար» - Երևան 2010թ. /Հ. Միտոյան, Լ. Սմբատյան/
4. Մանկապարտեզի վաղ հասակի առաջին և երկրորդ խմբերի (կյանքի առաջին և երկրորդ տարի) կրթական համալիր ծրագիր» - Երևան 2012 թ. /Ա. Հովհաննիսյան, Ս. Մարության և ուրիշներ/
5. «Մանկապարտեզի կրտսեր առաջին խմբի /2-3 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» /- Երևան 2012թ. /Հ. Միտոյան, Ս. Մարության և ուրիշներ/
6. «Մանկապարտեզի կրտսեր 2-րդ խմբի /3-4 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» - Երևան 2011 թ. /Ա. Հովհաննիսյան, Հ. Մինասյան և ուրիշներ/
7. «Մանկապարտեզի միջին խմբի /4-5 տարեկանների/ կրթական համալիր ծրագիր» - Երևան 2011 թ. /Հ. Միտոյան, Ս. Մարության և ուրիշներ/
8. Որոշ ժամանակակից տեխնոլոգիաներ որպես հայկական կրթօջախների ուսուցման օպտիմալացման միջոցներ, Գիտաժողովի նյութեր, /հանրապետական գիտաժողով՝ նվիրված Ղ. Աղայանի 170-ամյակին/
9. Ուսուցիչը կրթական բարեփոխումների սուբյեկտ, Նախաշավիղ գիտամեթոդական հանդես, 2009, էջ 43-48
10. Ուսուցման սուբյեկտի ճանաչողության հիմնախնդիրը մանկավարժական գործունեության արդյունավետության հայեցակետից, ՝Վասն արդարութեան՝, Լույս 3/(53)2005, էջ 58-60
11. Ուսուցչի մասնագիտական գործունեության կատարելագործման ժամանակակից տեխնոլոգիաները,Գիտական հոդվածների ժողովածու, ՝Մանկավարժություն և մեթոդիկա՝, Վանաձոր-2010, էջ 137-143

12. Ուսուցչի մասնագիտական պատրաստվածությունը դեռահասներին բացասական հակումներից ձերբազատելու խնդրում, ՝Մխիթար Գոշ՝ գիտամեթոդական հանդես հասարակական գիտություններ 1/ (13)2007, էջ105-107՝ Վանաձոր-2010,էջ 140-147: